ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02 » դեկտեմբերի 2013 թվականի №22 -Ն

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի 18 - րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՈՐՈՇՈՒՄ 22

Հաստատել Արգավանդ համայնքի 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների / ներառյալ ՝ ոչ հիմնական / շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝

հիմնական օբյեկտների համար

1 / մինչև 300 քմ . ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների , ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 7500 դրամ

2/ սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

ա/ 201 – ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15000 դրամ

բ/ 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -25000 դրամ

գ/1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար-35000 դրամ

դ/3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -1500դրամ

4/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության- 1500դրամ

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<1>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանցված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը :

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է - 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝

1 / ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 2000 դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար -2000 դրամ

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ մեկ քմ. – ի համար

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է -150 000 դրամ

3/ խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է -30 000 դրամ

4/ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է -50 000 դրամ

5/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում – 6000դրամ

Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում – 1000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանք, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները՝ ժամը 24. 00 - ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար - 25 000 դրամ

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար – 100 000 դրամ

3/ բաղնիքների / սաունաների / համար - 200 000 դրամ

4/ խաղատների կազմակերպման համար - 600 000 դրամ

5/ շահումով խաղերի կազմակերպման համար - 450 000 դրամ

6/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1 000 դրամ

2/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2 500դրամ

3/ այլ արտաքին գովազդի համար - 1000 դրամ

4/ դատարկ գովազդային վահանակների համար - 700 դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է – 2 000 դրամ:

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 8 000 դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու , շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 5 000 դրամ:

11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատ կացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել – 3 000 դրամ:

12.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար սահմանել - 3 000 դրամ:

13. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճար սահմանել

1/ յուրաքանչյուր բնակչի համար - 100 դրամ

2/ սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար-400 դրամ

14 .Սույն որոշման 1 – ին , 2 – րդ ,3 – րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0 ,5 գործակցով :

Ավագանու անդամներ կողմ (6) դեմ (0) ձեռնպահ(0)

Գրիգորյան Կարապետ

Կոստանյան Հովհաննես

Մարգարյան Տիգրան

Մուրադյան Արթուր

Սարգիսյան Մուշեղ

Սարգսյան Արմեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02 » դեկտեմբերի 2013 թվականի №23 - Ն

2014 Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՈՐՈՇՈՒՄ 23

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2014թ. համար սահմանել 185.000 / հարյուր ութսունհինգ հազար / դրամ:

Ավագանու անդամներ կողմ (6) դեմ (0) ձեռնպահ(0)

Գրիգորյան Կարապետ

Կոստանյան Հովհաննես

Մարգարյան Տիգրան

Մուրադյան Արթուր

Սարգիսյան Մուշեղ

Սարգսյան Արմեն

ԱՎԱԳԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ